

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի: Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միևնույն կարագրատան մէջ:

(Ստորագրողացիք զվտում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшак“

Կարագրատանը բայ է առաւօտեան 10—2 ժամ (Վաղի կիրակի և աստի տրեքից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն շաբաթով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր թափին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օրվայ կենսական հարցը.— Ներքին տեսու-
թիւնը: Երամապահութիւնը: Նամակ թելակցի:
Նամակ Ն. Աղբիւրից: Նամակ Մայկոսայից: Նամակ
Խմբագրին: Ներքին լուրեր: Արտաքին տե-
սու թիւն: Գրանցիւր: Վրացիին հեռագիրները:—
Յայտարարութիւններ:— Բանասիրական: Խնն-
քը:

ԾԱՆՈՒՅՈՒՄ

Կառավարիչը Քաղաքային, Ա-
ռևտրական և Արհեստական վար-
չութեանց յայտնում են, որ մա-
յիսի 28-ին, առաւօտեան 10 ժա-
մին Հանդուցեայ Կայսրուհու
Թաղման օրը, անկան անցեալ հո-
գեհանգիստներից, պիտի կատարվի
հայոց Վանքի Մայր եկեղեցում
խուրդիայ, Թաղման հանդէս:
Սորա համար խնդրում են հորհ-
բերել նշանակեալ օրը բոլոր թիֆ-
լիսի բնակչաց:

ՕՐՎԱՅ ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՅ

II

Երկար խօսելը մեզ շատ հե-
ռու կը տանի, ես կառաջարկեմ
միայն այն, որ ամենամանրագիւտն
է, որը առաջանում է Հայաս-
տանի հայերի ներկայ թշուառ
գրութիւնից:

Ճողովակն բանիմաց ան-
ձինք, կազմեն մի մեծ ընկե-

րութիւն, ողորմած Կայսեր
հովանաւորութեան ներքոյ,
օգնելու թշուառ հայերին,
ուր և լինէին նօքա:

Այդ ընկերութիւնը լինի սիրտ,
րից բղխելով կենսաբեր երակ-
ները կը թափանցեն ամենուրեք,
ուր կայ հայի «ախ»: Այդ ընկե-
րութիւնը լինի հեղինակ և պատ-
կառելի լինի ամեն մի հայի հա-
մար: Այդ ընկերութեան այսօ-
րուայ գործն է ուղարկել ան-
ձինք տեղեկանալու Վանայ և
ընդհանրից ներկայ գրութեան և
այն միջոցների մասին, որոնք յար-
մարաւոր կը թուին անմիջապէս
առաջարկելու:

Երեւի թէ նոյն իսկ առաջին
քայլը ընկերութեան կը լինի սո-
վելոց հաց բաժանել, հիմեղ Հա-
յաստանում ամբարանոցներ —
մի տարվայ պաշար, և բանալ
հիւանդանոցներ, որոնց գոնեայ
մէկը կարելի լինի առ միշտ թող-
նել: Եւ առհասարակ աչք ունե-
նայ տաճկաց Հայաստանի վրա
բաւական ժամանակ, բանի որ
ազգի ճգնաժամն է, բանի որ Տաճ-
կաստանի գործերը խառնիճազանճ
գրութեան մէջ են, քանի որ կա-
ռավարութեան տուած դրամական

հարուածը կը կորցնի իր հետե-
րը, բանի որ օրինաց փոխարէն
զէնք է բաշած հայերի զլինի,
քանի որ ոչ տաճիկ կառավարու-
թիւնը, այլ թափառական բրդերն
են տիրապետում հայերին և այդ
բոլորը գոնեայ յանուն մարդկու-
թեան, յանուն մարդասիրութեան:

Հասպենք, դանդաղ գործելը
եթէ ներելի է, միայն այն ժա-
մանակ, երբ պատմութիւնը իր
բնական դանդաղ քայլերովն է ըն-
թանում, բայց այսօր, այսօր ճրդ-
նաժամ է, ամեն մի ռուպէս, ամեն
մի փայրկեանը անդառնալի կո-
րուստ պէտք է բերի ազգին, խեղճ
է հայոց ազգը, ձեռքից գնում
է, ժամ է օգնելու: Հասպենք,
չտապենք:

Բ. Նաւասարդեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՎՐԱ

Երբ շերամները սկսում են դուրս գալ սեր-
մերից, այդ դուրս եկածները հաւաքելով ու-
րիշ ամանի վրա են դնում: Սրա համար սեր-
մը բանում են առաւօտեանը արեգակի թոյլ
ձառագայթների տակ, դնում են վրէն թը-
թեան մի քանի փոքրիկ տերեւներ և երբ
դուրս եկած շերամները նորանց վրա են հա-
ւաքելով, զգուշութեամբ տերեւները վեր են

կիսատախան և կիսաերօզական ճաշակով, և
նոտան փոքրիկ սեղանի մօտ, միմեանց հանդէպ,
Քանի ռուպէից յետոյ մի մանկահասակ կին յուշիկ
քայլերով ներս մտաւ և լաւութեամբ զրեց սե-
ղանի վրա մի շիշ գինի, երկու բաժակի հետ, և
նոյնպէս լաւութեամբ հեռացաւ: Նրա զլինի հայ-
կական պաճուճանքը բոլորովին քողարկել էր
դէմքը, երևում էին միայն զոյգ սևտակ աչքերը
աղեղնաձև յոնքերի հետ: Բայց ինչ որ երևում էր,
այդ էլ բաւական էր փոքր ի շատէ հակացողու-
թիւն կազմելու նրա գեղեցկութեան մասին:

Մէլքե-Մանուէլը բաժակները լցնելով, մէկը
լնքը խմելով, միւսը Վարդանին տալով, ասաց.
— Ես շատ ուրախ եմ, որ մեր վանքերը ինձ
են ըստ մեծի մասին մարդկային բնակութիւնից
հեռու, լեռների, ձորերի և անապատների մէջ: Այ՛ մի
տեղ չը կան այնքան սրիկայ և անբարոյական պա-
տաններ, որքան Վաղարշապատում: Այ՛ մի տեղ չը
կան այնքան թեթիվ վազի տէր կիներ, որքան այս-
տեղ: Ահա այդ գեղեցիկ կինը, որ այնպէս հա-
մատ և ամօթխած կերպով ներս մտաւ և իսկոյն
հեռացաւ, մի արեղայի սիրուհի է, Վանքը, ես
մտածում էի, գոնէ պահպանում է կրօնական
ընթացակարգը, բայց այստեղ մարդիկ ոչինչ
չեն հաւատում, Արեղայի վարքը պատճա-
ռում է ժողովրդի մէջ զայնթափելիութիւն և թե-
րահաւատութիւն, Այստեղ արդէն սկսվել է
լուրջըրկի բողոքականութիւնը: Անցնելով փո-
ղոցներից, ի հարկէ, դու տեսար բաւական գեղե-
ցիկ տներ, եթէ քննելու լինիս, թէ ուրեք են
նրանց տէրերը, կը տեսնու, որ համարեա բոլորը
արեղաների հետեւ կամ մեծաւոր աղափականներ
են, որոնք առաջ աղքատ են եղել և իսկապէս

առնում և դնում փոքր ինչ յարդ ածած մի
ամանի վրա: Մարտար սերմերից շերամները
դուրս են գալիս միայն առաւօտեան դէմ,
ուստի առաւօտեան, մօտ մի ժամ ընթաց-
քում, հասարակ են որքան պարտատի դուրս
եկած շերամ է լինում և այնուհետև թող-
նում են սերմը մինչև հետեւեալ առաւօտ,
վրէն մի քանի հատ տերեւ և մի երկու բա-
րակ ու փոքրիկ ծղնօտ թողնելով որոյ վրա
կարողանային բարձրանալ կտաւի վրա մնա-
ցած կամ հէնց նոր դուրս եկող շերամ-
ները:

Հուաքած շերամները իրանց ամաններովը
պահում են նոյն այն բնակարաններում, ուր
պիտի կատարվի շերամի սնուցանելը: Սեր
գիւղացիները այս բանի համար սովորաբար
բանեցնում են քեօշիկ (չորացրած մրգե-
ղէն և ընդդէմ պահելու բնակարանը), մա-
ռանք (ուստի պահարանը), կամ թնորս-
տունը և երբեմն իրանց կեցած բնակարանը:
Վերջին գիպուածում իրանք գետեղվում են
բակի մի անկիւնում կամ տան դուռի
թում:

Սերմը կատակելուց յետոյ գիւղացուհին
բոլոր ուշադրութիւնը դարձնում է շերամնե-
րին խնամելու և սնուցանելու վրա: Նորա-
ծունդ շերամներին ուսույլ տերեւ են տալիս,
հէնց որ տեսնում են առաւօտ արդէն թա-
ռամել է: Այս ժառանակ տալիս են միայն
քեօշիկ, նոր բացված տերեւներ: Տերեւ թարմ
մնալու համար նրան թացացրած քանկների
մէջ են ածում, այդու՛մ պահելուց, և այնպէս
տուն բերում:

Շերամների անկուս համեմատ հեղհեռեւ
ամանների թիւը շատացնում են: Մէկից
միւս ամանի մէջ տեղափոխելու համար սյա
վերջին ամանի մէջ նոյնպէս փոքր ինչ յարդ
են ածում ու առաջին ամանից թթեւու
տերեւը շերամների հետ վեր առնելով, նոր ա-

մարիւ հարտացել են, ես, իրան ասեմ, տանել
չեմ կարողանում երբ նկատում եմ, որ այստեղ
հարկը հազարներ են վատնվում, երբ այժմ մեր
ամեն մի կոպէկը մեծ արժէք ունի մեզ համար:
Հազարումէկ պէտքեր ունենք, ամենի համար փող
է պահանջվում, և Պոլսում ազգային սնուցիչը
դատարկ է: Պատրիարքը դեօ շուկի իր ամենա-
անհրաժեշտ ծախքերը ցուցանելու համար, Բայց
նրա վրա այժմ ծանրացած են այնպիսի գործեր,
որոնց յապաղումը, որոնց յետաձգութիւնը յաւի-
տենական կորուստ պիտի համարվի ազգի համար:
Այսուամենայնիւ, ես չեմ նկատում, և Պոլսի պատ-
րիարքարանի և հայոց Մայր Աթոռի մէջ համե-
րախութեան մի նշոյն անգամ: Մանկուհին և Պոլ-
սում քսան և հինգ հազար կորցրեց կոնսոլիտների
մէջ, և որպէս լսում եմ, ետեսուն հազար այս
մօտ օրերում ուղարկված է ստանան գիւտէ, ինչ
զմոխային ռպատակների համար, բայց հայոց պատ-
րիարքը, մեր միակ գործունեայ մարդը, դեօ շու-
կի...

— Այդ գինին փոքր ինչ թթված է, երևում,
ընդմիջեց Վարդանը, ես չեմ իմ գոյնը զո-
— Դու չէիր լսում ինձ, գոչեց Մէլքե-Մանու-
էլը վշտացած ձայնով: Ես այժմ այնպիսի
— Լսեցի, պատրիարքը դեօ շուկի...
— Այսպէս չէ կարելի խօսել...
— Ինչ խօսել, ես միայն մի բան գիտեմ,— ինչ
ազգ, որ յոյսը դրել է միայն կեղեցականների
վրա, նրա կործանման սկիզբը մօտ է վախճանին:
Մանկահասակ կինը կրկին ներս մտաւ, յուշիկ
քայլերով մօտեցաւ սեղանին և զրեց, նրա վրա
մտաուցարանի մէջ դարած նախաճաշիկ: II

Ի Ն Ն Թ Ը

ԱՐԿԱՆՆԵՐ ՎԵՐՋԻՆ ԲՈՒՄՔՈՒՐԵՔԱՎԱՆ
ՊԱՏԵՐԱՋՄԻՅ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԽԱ

Վարդանը, տեսնելով Մէլքե-Մանուէլին, կար-
ծեաւ, առժամանակ մտապառ դառն ցար, որ այն-
քան սաստիկ կերպով մաշում էր նրա սիրտը:
Մայր գրանից, Յովհաննէս հայր սուրբի առած
յոյսը, թէ գաղթականների հետ եկած քահանանե-
րից և տանուտէրերից կարելի է տեղեկանալ ծե-
րուկի խաչի ընտանիքի որտեղ լինելու մասին,—
այդ ուրախալի յոյսը բաւական հանդուստեղի էր
նրան: Կա մտածում էր, թէ այդ տեղեկութիւն-
ներով կարող է գտնել Լալային, և իր սիրով կը
ճեղքեցնէ նրա պանդխտութեան տառապանք-
ները:
Բայց այդ սիրտ խոցող կսկիծների առժա-
մանակայ ըթութիւն էր միայն, երբ վտարը գու-

լանում են, և սրտի վերջերին տիրում է րուպէ-
կան թմրութիւն:
Տօնը, ուր տանում էր նրան Մէլքե-Մանուէլը,
գտնվում էր Վաղարշապատի հին փողոցներից
մէկի մէջ: Ընկածները թէև մանր էին և խիստ
աղքատ, բայց որպէս առհասարակ Վաղարշապա-
տի տները, ունէին ընդարձակ բակեր, որ հովա-
նաւորված էին պտղատու ծառերով:
— Դու շատ գոճ չես լինի, ասաց ճանապարհին
Մէլքե-Մանուէլը,— եթէ գիտես, թէ որտեղ եմ
տանում քեզ:
— Ինձ համար մի և նոյն է, պատասխանեց
Վարդանը անխոյր ի կերպով:— Ես միայն ցանկա-
նում էի մի քանի տեղեկութիւններ ստանալ պ.
Մայրանի մասին: Այնտեղ մեզ իս խանդարող չի
լինի:
— Ոչ դր:
Փոքրիկ դրան մօրճը զարկեցին, մի պատա-
կին բաց արաց դուռը: Նրանք ներս մտան և
դուռը կրկին փակվեցաւ նրանց ետևից:
— Այ՛ նանի, քեզ համար մի նոր հիւր եմ բերել,
ասաց Մէլքե-Մանուէլը:
Պատառը մի խորամանկ հայացք ձգելով Վար-
դանի երեսին, պատասխանեց,
— Աչքիս վրան...
— Դէ շուտ, նանի, մեզ համար մի շիշ գինի,
աստիկ ծարաւ երբ, ասաց Մէլքե Մանուէլը: Եւ
ժողովարդ, աղեղնացրուց:— Հոգիդ կը հանեմ, եթէ
մի ուրիշ մարդ ներս ես թողի:
Պատառը խորհրդաւոր կերպով զրուրը շարժեց
և հեռացաւ:
Երկու երկուսարդները մտան մի փոքրիկ, բայց
բաւական մաքուր սենեակ, որ կահաւորած էր

Միջոցներն Թեղեցիներն իրենց 2 ր., Յովհաննէս Բաղդասարեանց հին-նախը 5 ր., Յակոբեան Բաղդասարով Տեղեցի 5 ր., Գասպար Մարտիրոսեան Ստանբուլցիով իրենց 3 ր., Գասպար Մարտիրոսեանց նոր-նախը 2 ր., Աւետիք Մանուկեանց վերին-աղբերակի 3 ր., Գեորգ Կիրակոսեանց թէլաւի 1 ր., Բաղդասար Բաղդասարեանց թէլաւի 1 ր., Նիկիայի Սոցեանց թէլաւի 1 ր., Աւարէլ Թումանյանց մողղոցի 1 ր., Քաղէս Սարգիսեանց հին-նախը 2 ր., Կոստանդին Բաղդասարեանց հին-նախը 1 ր., Ստեփան Մանուկեանց կառուցման հին-նախը 1 ր., Ստեփան Բաղդասարեանց կառուցման հին-նախը 2 ր., Մարտիրոս Բաղդասարեանց կառուցման հին-նախը 1 ր., Ստեփան Մարտիրոսեանց հին-նախը 1 ր., զուամարն է 52 ր.:

Խաչատուր Նազարեանց

ՆԱՄԱԿ ԽՐԹԱԳՐՈՒՆ

Շահրուժ, մարտի 24-ին

Կարգալով պատուական Վճարի րազդից մէջ այն առիթը, որ զրգած են վանից, Էջարիկ հանց, Հայրիկ հանց միջ Շահրուժ լինող քանի հայ վաճառականների գործակատարներն ցանկանալով մի քանի կողմից նուրիւն, ահա նամական զրկելով ներկայիս մէկ փոխանակագիր, խնդրեմք, պ. խմբագիր, նեղութիւն կրէք թիֆլիս ստանալ Գաւրիկեան վաճառական պ. Օհան Տէր-Օհանովից յիսուսն բուրի թղթաղարմը (50 ր.) և հասուցանէք վանայ սովաններին խնամող Մանուկեանցին, որը համաբոված է յետադոյ կիրպիւ. 1878 թիւից յորդորանք պ. Գրիգոր Մանուկեանցին, միջոցից իւրաքանչիւրն պարտաւորեց, Զատիկ, Զորհնեաց տոներին և իւրաքանչիւր որ իր աստիճանութեան օրն ըստ ցանկութեան իւր մի քան նուրիւն յօդուս Թէրանու հայոց ուսումնարանին, նոյնպէս Շահրուժ եկող գնացող հայ կամ օտար ազգից ծանօթ մարդն խմբով կը տանէին ճանապարհուր և մաղթանք կարգալով բարի ճանապարհ, օճէր ուղղեալ անելով փող կտանէին նոյն նպատակաւ, որի դիքն մինչև ներկայ թիւս հասել է 226 դան պարսից դրամ, տեղեկանալով վանայ սովանների գումն յիճակն, պատկերի պարնայքն անկի լաւ համարեցին այս փողի կէսն նուրիւն սովաններին, իսկ կէսն նրան, որի նպատակաւ ժողովալ էին Ահա նուրիւնաց ազգանուններն ստաց են:

Յովսէփ Կատարեանց 50 դան, Յարութիւն Տէր-Պետրոսեանց 36 զ. 50 կ., Հանգուցեալ Մարտիրոս Աղամեանց 30 զ., Գաւրիկ Գրիգորեանց 15 զ., Աւետիս Տէր-Մովսէսեանց 16 զ., Թուման Հախումեանց 7 զ., Գրիգոր Ասրիեանց 10 զ., Համարձու Յարութիւնեանց 5 զ., Մովսէս Աւանեանց 5 զ., (զարկեցիք) Յովհաննէս Ա-

ղանց 20 զ., Գրիգոր Մանուկեանց Պետրոսեան 15 զ., Աստուածատուր Մանուկեանց Աստուածատուրեանց 10 զ., (աղբերակ) Գասպար Աղամեանց 12 դան Յակոբ Մարտիրոսեանց 5 զ., Ստեփան Արևանց 5 զ., Թուման Արևանց 2 զ., (Շուշեցիք) Կանեանքի Թանրով 10 զ., Միր Մէլիք 2 զ. 50 կ., (Շումանցի) Սաղար հաջի Թաղիւն 10 զ., զուամարն է 266 դան որից կէսը 133 դան հասցրած ենք թէրանու հայոց ուսումնարանին, իսկ մնացեալ կէսն 133 դան, որ լինի 50 բուրի թղթաղարմը, փոխանակին ձեռ զրկելով, խնդրեմք ստանալով զրկէք ուր հարկն է: Ի գրութիւն նուրիւնաց խնդրեմք երկուող դրամներն պատուական լրագրից մի անկին չնորհէք:

Յարութիւն Տէր Պետրոսեանց

ՆՆՐԻՆ ԼՈՒՐԵՐ

Գրիգոր Արծրունի չը կարգաց իր գաստիսու-

թիւնը մայիսի 26-ին, որովհետև թիֆլիս հասարակութիւնը կատարեալապէս անտարբեր գտնվեցաւ զէպի այդ գաստիսութիւնը: Այն մի քանի անձիք, որոնք տոմսակ են վեր առել, կարող են իրանց փողը յետ ստանալ Արծրունու թատրոնի կասսայից:

Գրիգոր Արծրունու գաստիսութիւնը ձեռով մասին Հայաստանում մենք կը տպենք Վճարի մէջ, որպէս բանակարական լինէ այդ յօդուածով չը հետաքրքրվեցան թիֆլիսցիները, մենք հասարակացած ենք որ գաւառացիների համար դա հետաքրքրելի կը լինի վաղուց է արդէ մենք մեզ համար համոզուեմք ենք կազմել և այժմ աւելի էլ հաստատուած է մեր համոզումը, որ մեր ամբողջ գործունէութիւնը և նոյնպէս Վճարի հրատարակելու միջոցն գաւառների մէջ արձագանք է գտնուած:

ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆՍՈՒ

«ГОЛОСЪ» լրագրի մէջ կարգուած ենք հետևեալ առաջնորդող յօդուածը:

Փարիզի սօցիալիստներից մտադրված տոնը ի պատիւ կոմունայի չափազանց անաջող անցում է Յայանի է, որ սօցիալիստները սպասում էին կառավարութեանը, որ այդ օրը 50000 մարդ կը հաւաքվէ, մինչդեռ Բաստիլիայի հրապարակի վրա միայն 600 մարդ հաւաքվեցան և այն էլ ոչ թէ միասին, այլ առանձին խումբերով, որոնք մէկը մեկի հետ

տուր լինել, այլ մի քանի յաջող յարձակումներ գործելով, կարողացան խել թշնամեց հարուստ աւար և պատերազմական պատրաստութիւններու լի սիրտը և այս րոպէս թնդում է մի անասնանուրակութեանը, կըր մտաբերում են այն անուանալի օրերը: Կոմուն էին ոչ միայն երկուստարիները, այլ և ձերերը, այլ և կրկինները: Ես այժմ համոզված եմ, որ ստրկութիւնը չէ կարող խել մի ժողովրդի քաջութիւնը, որ նախելք թափել էին նրա երակները մէջ: Ստրկութիւնը կարող է միայն ժամանակաւորապէս ճնշել և խեղդել քաջաշունչներն ոգին, բայց սպանիլ— ոչ: Զարկեց յաջող ժամը, նա կրկին կը դարձնի իր վաղեմի ուժով և աւելի սաստիկ զօրութեամբ: Ես այդ տեսակ իմ աչքով: Ես միակ ուրախալի երկովքը, որ վերջին աղէտների մէջ կարող է միլիթարել մեզ,—այդ է:

Վարդանի մտաւորական գէտը փոքր լին պայծառացաւ և նա իր տխուր աչքերը ուղղեց զէպի վեր, կարծես, աղթում էր, կարծես, փառ էր տալիս վերին Նախահամութեանը:

— Ինչով վերջացաւ, հարցրեց նա:

— Երկար պատուարով անմատչելի լեռների մէջ, թէև շատ դժուար, բայց դարձեալ կարելի էր, եթէ մենք գործ ունենայինք միայն քրիզի հետ: Բայց չուտով պարանցին մեզ կանոնաւոր գործեր: Այդ վերջիններն նոյնպէս կարելի էր ընդդիմադրել. մեր կողմն էր մի անընկճելի զօրութիւն,— Հայաստանի լեռները, որ այնքան խրեմաբով պահուած են իրանց մէջ ապաստանողներն: Բայց պաշարի և ուտեստի պակասութիւնը վրա հասաւ, որպէս մի թշնամի, որին յաղթել անկարելի էր: Թէև երբեմն գիշերով մարայինք իջնում

ուրից ուղեորվեցին Pere Lachaise գերեզմանատունը և դա՛նի պատկեր դրին այն պատի մօտ, որտեղ 1871 թուին, մայիսի 23-ին հրացանի անոնցան այդ գերեզմանատունը գրաւող կոմունարները: Պօլիցիան անդադար հրաւիրում էր ամբոխին չը կանգնել և 13 մարդ, որոնք չը կամեցան կատարել պօլիցիայի հրաւերը, կալանաւորվեցան: Կալանաւորված այդ մարդիկանցից եօթը հոգի գանազան ազգութիւններին պատկանող օտարականներ էին: Կրօնց կալանաւորելու պատճառով պատգամաւորների ժողովի արմատական կուսակցութեան մի քանի անդամներ մտադիր են կառավարութեանը հարց տաւաջարի: Ներքին գործերի նոր մինիստր պ. Կոստան յայտնել է, որ այդ հարցին նա անմիջապէս պատասխան կը տայ: Արանց երևում է, որ մինիստրը հաւատացած է, թէ պատգամաւորների ժողովի անդամների մեծամասնութիւնը հաւանութիւն կը տայ կառավարութեան կարգաբերութեանը:

Այդպիսով Ֆրէյսիէի մինիստրութիւնը կարողացաւ հեռայնել իրան պատահելի դժուարութիւններից մէկը: Ֆրանսիական արմատականների մեծամասնութիւնը հասկացաւ, որ այժմ անյարմար է փողոցային անկարգութիւններ անել, որովհետև հանրապետութեան թշնամիները և եղբայրները բոլոր ջանքերով աշխատում են անկարգութիւններ ծագեցնել, յուսալով, որ կառավարութիւնը ստիպված կը լինի ընդդիմադրել այն անկարգութիւններին և չի համարձակվի փակել հողերը միաբանութիւնների ուսումնարանները, իսկ այդ ուսումնարանների փակելու ժամանակը հասնում է: Կրօնց պահպանողական անուանող կրեակները, որոնք բացարձակ յայտնում են իրանց ցանկութիւնը այժմեան կառավարութեանը իշխանութիւնից զրկելու մասին, ստիպված կը լինեն միայնակ գործել, չը յուսալով 1871 թուականի կոմունարների օգնութեան վրա:

Յայտնել է, որ Ֆրանսիական սենատի նախագահ պ. Մարտիլ հրաժարական է տուել և շատով նրա փոխանորդի ընտրութիւնն է լինելու: Այդ ընտրութեան ժամանակ կրեակները առաջին անգամ կը փորձեն իրանց ոյժերը: Սենատի անդամների սկզբնական ժողովների ժամանակ երկու կանգնեցան ընտրվեցան հանրապետականների կողմից Լէօն Սէ, իսկ միապետականներից կողմից Ժիւլ Սիմօն: Այս վերջինին կանդիդատ ըն-

թիւնը: Ես հաւատացած եմ, որ Կոստանը կը հաւաքեն իրանց ուժերը և կրկին կը տիրեն թուղած երկրները: Այն ժամանակ այն կողմերում խաղաղութիւն կը սրի, և այն ժամանակ պէտք է աշխատել, որ աշակերտները և բայաղէցիք վերադառնան իրանց հայրենիքը: Եթէ ոչ, Հայաստանի ապագայի համար մեծ դժբախտութիւն կը լինի, եթէ այդ երկու սահմանակից գաւառները, որպէս են Ալաշկերտը և Բայազեդը, բոլորովին կը գտտարկվին հայերից և նրանց անգը կը բռնեն վարենի քրդերը:

— Ի՞նչ կարծուած ես, որ այդ գաւառները միշտ ուսուց ձեռք կը մնան:

— Կիցուք թէ պատերազմից յետոյ, երբ խաղաղութեան դաշինք կը կապվի, այդ գաւառները կրկին կանցնեն թուրքաց ձեռքը: Բայց այն ժամանակ, ես հաւատացած եմ, որ հանգամանակները կը փոխվեն, և միևնույն ժամանակ կրկին այժմեան անկարգութիւնները.— Զարդված թուրքը խեղճ դուրս կը հաւաքէ... Ես դեռ մի ուրիշ յոյս էլ ունեմ...

տրել մի տեսակ բողոք է կառավարութեանց մարտ ամսին արած կարգաբերութիւնների դէմ, որոնք հակառակ էին սենատին, որովհետև նա մերժեց մինիստր Ժիւլ Ֆրէյսի օրէնքի 7-րդ յօդուածը: Ժիւլ Սիմօնի կանգնեցաւ ընտրվելու այդ բնաւորութիւնը ի նրկատի ունենալով, պէտք էր ներթափանց, որ նա ընտրութիւնների ժամանակ ձայների մեծամասնութիւն կը տանար, բայց նորերումս կեղծ տեղեկութիւններից երևում է, որ 7-րդ յօդուածին հակառակ բուէ սուղ չափաւոր հանրապետականները, այժմ համաձայն են Լէօն Սէին քուէարկել: Այսպիսով կարելի է հաւատացած լինել, որ հանրապետականների կանդիդատը ներկայ ընտրութիւնների ժամանակ կարող է յաղթող հանդիսանալ:

Հանրապետականները բաւական դժուարութիւնների հանդիպեցան, մինչև կարողացան Ժիւլ Սիմօնին մի հակառակորդ գտնել: Յայտնել է, որ Լէօն Սէ Ֆրանսիական զեպան էր նշանակված Լժողօնում և նրա զխաւոր նպատակն էր բանակցել անդալիսի կառավարութեան հետ աւետարական նոր դաշնագրի մասին: Լէօն Սէ Ֆրանսիական սենատի նախագահութիւնը ընտրուելով, ստիպված կը լինի թողնել զեպանի պաշտօնը: Լէօն Սէ յի յաղթութիւնը մի ծանր հարուած կը լինի պահպանողականների համար: Այդ հանգամանքը կապացուցանի, որ պահպանողականները սենատում անգամ չեն կարող մեծամասնութիւն ունենալ, երբ ցանկութիւն կը յայտնեն ոչնչացնել հանրապետութիւնը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԷՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՅՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆՈՒԳ, 26 մայիս: Այսօր հասաւ այստեղ Մեծ Եշխան Միխայիլ Նիկոլայի խաղաղութիւն: Իսկոյն կատարեցաւ Աստուծոյ կամքով վախճանված Կայսրուհու մարմնի Պետրոպոլսի կեղեցիկ տեղափոխելու համար: Հանդիսին ներկայ էր զերմանական թագաւորանոցը: Վեսպանների կոնցերտից յի գումարվելը Բերլինի մէջ նշանակված է յունիսի 16-ին:

Իմրագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Թիւնից: Ես հաւատացած եմ, որ Կոստանը կը հաւաքեն իրանց ուժերը և կրկին կը տիրեն թուղած երկրները: Այն ժամանակ այն կողմերում խաղաղութիւն կը սրի, և այն ժամանակ պէտք է աշխատել, որ աշակերտները և բայաղէցիք վերադառնան իրանց հայրենիքը: Եթէ ոչ, Հայաստանի ապագայի համար մեծ դժբախտութիւն կը լինի, եթէ այդ երկու սահմանակից գաւառները, որպէս են Ալաշկերտը և Բայազեդը, բոլորովին կը գտտարկվին հայերից և նրանց անգը կը բռնեն վարենի քրդերը:

— Ի՞նչ կարծուած ես, որ այդ գաւառները միշտ ուսուց ձեռք կը մնան:

— Կիցուք թէ պատերազմից յետոյ, երբ խաղաղութեան դաշինք կը կապվի, այդ գաւառները կրկին կանցնեն թուրքաց ձեռքը: Բայց այն ժամանակ, ես հաւատացած եմ, որ հանգամանակները կը փոխվեն, և միևնույն ժամանակ կրկին այժմեան անկարգութիւնները.— Զարդված թուրքը խեղճ դուրս կը հաւաքէ... Ես դեռ մի ուրիշ յոյս էլ ունեմ...

(Կը չարունակվի)

